# ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ. — ՀԱՅԱԳԻՐԸ

## ՄԵՐ «Ա. Բ. Գ.»Ը

ՈՎ, որ ինծի գիր մը սորվեցուց՝ իրաւցնէ իր ծառան ըրաւ զիս» կ'ըսէ արաբական առածը: Հապա ո՛րչափ աւելի երախտագիտութիւն պարտի սնուցանել իր մէջ ամէն ազգ անո՛նց հանդէպ որոնք լեզուի մը Այբուբենքը հնարած են: «Գիրերը — կը գրէր Մեսր. Եպսկ. Մուրատեանց — հաստատուն անօթն են՝ մարդուս հոգիին ու լեզուին ճոխութիւնները երկար դարեր կրելու և յաւերժացընելու»: Տեսէք Դուրեան Սրբազանն ալ ի՛նչ կոկիկ կը բանաձևէ այս մասին. «Մարդուս խորհուրդները որոնք կենդանի բարբառով կը հաղորդուին ուրիշի, յաջորդ սերունդներո՛ւ ալ աւանդելու և այսպէս անցանելի գաղափարաց կայում տալու համար՝ անխուսափելի պայման մըն է **գիր** որ ժողովուրդի մը մատենագրութեան և անոր պատմութեան կեանքն ու սնունդն է»:

Հայ նշանագիրերու գիւտը չեղած, Ասիացիներ Եգիպտացւոց պէս «բեւեռագիր» կը գործածէին բուռ 22, մինչեւ Ե. դար: Մեր մէջ, դիւանագիտութեանց համար գործածուողները «Պահլաւ գիր»երն էին, իսկ եկեղեցական գրութեանց համար «յոյն եւ ասորի տառերը»:

Հայը քաղաքական կազմակերպութիւն ու դիրք ունեցող ազգ, տիրացած միանգամայն կանոնաւոր լեզուի մը, 15 դար առաջ պէտքը կ'զգար նաև տիրանալու իր ուրոյն գիրին՝ որո՛վ միայն կարելի պիտի ըլլար ունենալ ազգային հեղինակութիւն, ճոխացունելով իր լեզուն, ծաղկեցունելով իր գրականութիւնն ու մտնելով յառաջդիմութեան իրական ճամբուն մէջ:

Այս տարր նպատակին էր որ յառած կը մնար երանելին Մեսրոպ՝ իր հոգիին բոլոր բաղձանքն ու իր ձգտումներուն բովանդակ ուժգնութեամբ: — Հայոց մէջ — ըստ պատմագրաց — մինչեւ այն ատեն գործածուող յունարէն, ասորերէն կամ պարսկերէն գիրերը չէին կրնար գոհացունել ազգին յառաջդիմական ոգին և անոր անկախ բնոյթը՝ կազմելու համար զուտ ազգային գրականութիւն մը: Առ այդ, Մեսրոպ՝ Սահակ Հայրապետի հետ համախորհուրդ՝ ջանաց ի չգոյէ ի գոյ ածել հայ տառերը. Թագաւոր ու իշխաններ ի մի խմբած, ժողովներ գումարել տուաւ՝ հնարք մը որոնելու, հայկական գիրը ստեղծելու առաջադրութեամբ, յանձն առնելով երկիրէ երկիր անձամբ թափառելու, գիտունէ գիտուն դիմելու և մատենադարանէ մատենադարան, ի խնդիր հայ այբուբենքին: Գնաց Միջագետք՝ Դանիէլ Ասորիին, անցաւ Եդեսիա՝ Պղատոնին, վազեց Սամոսատ՝ Հռոփանոսին, և այդ իմաստուն անձերուն խորհուրդներով, մանաւանդ ի՛ր իսկ հանճարեղ հնարամտութեամբ յաջողեցաւ հուսկ ուրեմն կերպարանել հայ այբուբենքը որ — բանասէրներու պրպտումներուն վերջին եզրակացութեանց համեմատ — աւելի հաւանական է՝ մեծ մասամբ Յունարէնէ առնուած ըլլայ յարմարցունելով, քան թէ սերած՝ Սեմականէն, ինչպէս կը կարծուէր: Բայց որքա՜ն արժանիք կրկին՝ Մեսրոպի կողմէ՝ կարգ մը գիրերու համար ալ, զորս պարսկերէններէ և ասորերէններէ ձեւացուց և կամ ինքնակերտեց զանոնք: Ոմանք կ'ըսեն թէ միայն ձայնաւորները գտաւ, ուրիշներ՝ թէ անոր ջանքը եղած է Այբուբենքին կրկնակ




ԲԱՂԴԱՏԱՑՈՅՑ ՏԱԽՏԱԿ
ՅՈՅՆ ԵՒ ՀԱՅ ԱՅԲՈՒԲԵՆՔԻ
Յոյն Այփաբեթին ձեւափոխութենէն կերպաւորուած Մեսրոպեան նախնի տառեր: